ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«19» 03 2025թ.
No 003309

**«ՎԻ ԱՌ ՄԵԴԻՔԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԵԳ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**
(հասցե՝ ք. Երևան, Սաֆարյան փ., 14/7)

Հարգելի՛ պարոն Գևորգյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի մարտի 18-ի ««Վի Առ Մեդիքալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 176-Ա որոշմամբ (այսուհետ՝ **թիվ 176-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00893/25 վարույթը:

«Վի Առ Մեդիքալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով Ընկերությունը կարող է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ: Ընկերության հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով: Ընդ որում, նման միջնորդություն կարող է ներկայացվել վարույթ հարուցելու մասին որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետի ընթացքում:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Ընկերությունը թիվ 176-Ա որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, իսկ Հանձնաժողովի նախագահի գրությամբ դիրքորոշում ներկայացնելու ժամկետը երկարաձգված լինելու դեպքում նաև այդ ժամկետում Ընկերությանը վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու պայմաններում, իսկ իրավախախտման հետևանքները վերացնելու անհնարինության դեպքում միայն իրավախախտման փաստի ընդունմամբ կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով: Ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

4. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասը սահմանում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

6. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

7. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

8. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**): Ընդ որում, Մեթոդաբանության 44-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

11. Ընկերության կողմից թիվ ՀԳ-00893/25 վարույթի հարուցումից հետո դրա շրջանակում քննարկվող վարքագծի կրկնությունը հիմք է նոր վարույթ հարուցելու համար:

12. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ուղարկվում է թիվ 176-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «7» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (214)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 28 ապրիլի 2025 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2025 թվականի թիվ 176-Ա

«ՎԻ ԱՌ ՄԵԴԻՔԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), 2025 թվականի մարտի 18-ի նիստում, քննարկելով «Վի Առ Մեդիքալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ար. Մեդտեխնիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **«Ար. Մեդտեխնիկա» ընկերություն**)՝ 2025 թվականի փետրվարի 19-ին ներկայացրել է հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**)՝ հայտնելով, որ Ընկերությունը «Facebook» սոցիալական ցանցի իր կայքէջում 2024 թվականի դեկտեմբերի 17-ին և 19-ին տեղադրել է հրապարակումներ այն մասին, որ Ընկերությունը հանդիսանում է «GE HealthCare» ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում:

Հաղորդմամբ նշվել է, որ «GE HealthCare» ապրանքանիշի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ նշված ապրանքանիշի միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում «Ար. Մեդտեխնիկա» ընկերությունն է, հետևաբար Ընկերության կողմից «Facebook» սոցիալական ցանցի իր կայքէջում տեղադրված գովազդային հրապարակումը պարունակում է կեղծ տեղեկատվություն, որը կարող է մոլորության մեջ գցել սպառողներին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Ար. Մեդտեխնիկա» ընկերությունը Հաղորդմամբ նշել է, որ Ընկերության գործողություններում ակնհայտորեն առկա են անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ: Մասնավորապես «Facebook» սոցիալական ցանցի կայքէջում «GE HealthCare» ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչը լինելու վերաբերյալ տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում և դրանով շփոթության մեջ է գցում սպառողներին Ընկերության կողմից վաճառվող ապրանքների ծագման և որակական հատկանիշների վերաբերյալ: Ավելին, «GE HealthCare» ապրանքանիշի միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում «Ար. Մեդտեխնիկա» ընկերությունն է, հետևաբար Ընկերությունն իր գործողություններով վնաս է պատճառում «Ար. Մեդտեխնիկա» ընկերությանն՝ իրեն վերագրելով «GE HealthCare» ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցչի կոչումը:

«Ար. Մեդտեխնիկա» ընկերությունը խնդրել է հարուցել վարույթ Ընկերության կողմից տնտեսական մրցակցության ոլորտում իրավախախտման վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2025 թվականի փետրվարի 27-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 60-Ա հրամանի հիման վրա «VR Medical Armenia» ֆեյսբուքյան էջում (այսուհետ նաև՝ **Ֆեյսբուքյան էջ**): իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է թիվ 60 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 60 արձանագրություն**):

Թիվ 60 արձանագրության համաձայն.

1. Ֆեյսբուքյան էջում 2024 թվականի դեկտեմբերի 19-ին արված է հետևյալ հրապարակումը. «VR Medical-ը հանդիսանում է ամերիկյան GE Healthcare ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: GE HealthCare-ը համաշխարհային առաջատար բժշկական սարքավորումներ արտադրող, նորագույն թվային կամ AI տեխնոլոգիաներով հագեցած ընկերություն է: Այս ապրանքանիշի սարքավորումները հնարավորություն են տալիս հիվանդանոցներին և բժիշկներին ավելի արդյունավետ ու ճշգրիտ աշխատանք կատարելու՝ ախտորոշումից մինչև բուժում: Սարքավորումները նախատեսված են տարբեր ոլորտների համար, ինչպիսիք են սրտաբանությունը, նյարդաբանությունը և ուռուցքաբանությունը: Հաստատված են FDA-ի կողմից: Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում նաև շրջակա միջավայրի վրա իր ազդեցությանը՝ ստեղծելով այնպիսի արտադրանք, որը վերամշակվում է և վերանորոգվում: Խթանեք Ձեր այցելուների վստահությունը՝ դառնալով ավելի հուսալի բժշկական կենտրոն: Ձեռք բերեք ամերիկյան GE HealthCare ապրանքանիշի սարքավորումները Հայաստանում պաշտոնական ներկայացուցիչ VR Medical-ից».

2. Ֆեյսբուքյան էջում 2024 թվականի դեկտեմբերի 17-ին արված է հետևյալ հրապարակումը. «VR Medical-ը ներմուծում է աշխարհահռչակ լավագույն ապրանքանիշերի բժշկական սարքավորումներ, նյութեր և մի շարք այլ պարագաներ: Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է նաև Վրաստանում ու Ռուսաստանում: Մենք հիմնադրվել ենք 2019 թվականին՝ նպատակ ունենալով կառուցել հուսալի առողջապահական համակարգ: Հանդիսանում ենք աշխարհահռչակ GE HealthCare,

DRTECH, NEMOTO BAYKEE, MT-MEDICAL ապրանքանիշերի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: VR Medical-ը ներկայանում է հմուտ ինժեներական թիմով, ճկուն գնային համակարգով, ինչպես նաև նորարարական տեխնիկայի ներմուծմամբ: Մատուցելով բարձր որակի ծառայություններ և սարքավորումներ՝ մեզ համար առաջնահերթ է յուրաքանչյուր հաճախորդի հետ կառուցած ամուր հարաբերություններն ու գոհունակությունը»:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2025 թվականի փետրվարի 28-ի թիվ 2452 գրությամբ «Ար. Մեդտեխնիկա» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այն մասին, թե սպառողի և/կամ ձեռքբերողի տեսանկյունից ինչո՞վ է տարբերվում «GE HealthCare» ապրանքանիշի սարքավորումները տվյալ ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող «Ար. Մեդտեխնիկա» ընկերությունից գնելը, նույն սարքավորումները «GE HealthCare» ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչ չհանդիսացող որևէ ընկերությունից գնելուց՝ ներկայացնելով յուրաքանչյուր տարբերության նկարագրությունը և այն հիմնավորող ապացույցներ:

«Ար. Մեդտեխնիկա» ընկերությունը 2025 թվականի մարտի 6-ին ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ «GE HealthCare» ապրանքանիշը բժշկական տեխնիկայի, սարքավորումների շուկայում շատ խոշոր արտադրող է, որի արտադրանքը հայտնի է իր բարձր որակով և վստահություն է վայելում սպառողների շրջանում: Սպառողի տեսանկյունից «GE HealthCare» ապրանքանիշի սարքավորումները ոչ պաշտոնական մատակարարներից/վերավաճառողներից ձեռք բերելը կարող է մի շարք խնդիրներ առաջացնել, մասնավորապես՝

1. Ապրանքի որակ և բրենդի պատկանելիություն.

Պաշտոնական մատակարարը հավաստում է, որ ձեռք բերված ապրանքը հենց «GE HealthCare» ապրանքանիշին է պատկանում, նոր է և համապատասխանում է «GE HealthCare» ապրանքանիշի բժշկական սարքավորումների տեղափոխման և պահպանության բոլոր ստանդարտներին: Այդ մասին «Ար.Մեդտեխնիկա» ընկերությունը սպառողի պահանջով կարող է ներկայացնել հավաստում հենց ապրանքն արտադրողից՝ «GE HealthCare» ընկերությունից: Ինչ վերաբերում է ոչ պաշտոնական մատակարարի կողմից վաճառվող արտադրանքին՝ ապա դրանց ծագումը, համապատասխանությունը տեղափոխման և պահպանման ստանդարտներին կամ այլ չափանիշներ «GE HealthCare» ընկերությունը որևէ կերպ չի կարող հավաստել:

2. Տեղադրում և տեխնիկական սպասարկում.

«Ար.Մեդտեխնիկա» ընկերությունից «GE HealthCare» ապրանքանիշի բժշկական տեխնիկա ձեռք բերելու դեպքում այդ տեխնիկան տեղադրվում և հետագա տեխնիկական սպասարկումն իրականացվում է «Ար.Մեդտեխնիկա» ընկերության մասնագետների կողմից: Նշված բոլոր աշխատանքներն իրականացվում են «GE HealthCare» ընկերության ստանդարտներին համապատասխան: «Ար.Մեդտեխնիկա» ընկերության մասնագետներն անցնում են «GE HealthCare» ընկերության կողմից կազմակերպվող պարտադիր ուսուցում

և վերապատրաստումներ, ինչը ապահովում է սարքավորումների հետ ճիշտ աշխատանքն ու սպասարկումը: Ավելին՝ ինչպես երաշխիքային ժամկետի ընթացքում, այնպես էլ դրանից հետո սարքավորումների վերանորոգման բոլոր աշխատանքներն իրականացվում են «GE HealthCare» ընկերության օրիգինալ պահեստամասերով: Կից ներկայացվում են «Ար.Մեդտեխնիկա» ընկերության մասնագետների սերտիֆիկատների մի քանի օրինակ: Դրանք տրամադրվում են «Ար.Մեդտեխնիկա» ընկերության մասնագետներին յուրաքանչյուր սարքավորման հետ աշխատելու և կոնկրետ տեսակի սպասարկում իրականացնելու համապատասխան դասընթացն հաջողությամբ աանցած լինելու փաստը հավաստելու համար: Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ անհրաժեշտության դեպքում, կարող ենք ներկայացնել մասնագետների բոլոր սերտիֆիկատները:

Այս ամենն էական նշանակություն ունի սպառողների համար, քանի որ բժշկական սարքավորումների տեղադրման, տեխնիկական սպասարկման հարցերում թույլ տված սխալները, անորակ պահեստամասերի օգտագործումը կարող են հանգեցնել սարքավորման խափանումների, հետազոտությունների ոչ ճշգրիտ արդյունքների, մինչև անգամ պացիենտների կյանքին և առողջությանը վնասի պատճառման:

3. Սարքավորումների ծրագրային ապահովում.

«Ար.Մեդտեխնիկա» ընկերությունից «GE HealthCare» ապրանքանիշի բժշկական տեխնիկա ձեռք բերելու դեպքում սարքավորումները տրամդրվում են հասանելի ամենաթարմ ծրագրային ապահովումների տեղադրմամբ: «GE HealthCare» ապրանքանիշի սարքերը մշտապես թարմացվում են նորարարական ծրագրերով, իսկ մատակարարը տեխնիկական սպասարկման շրջանակներում ապահովում է նաև այդ թարմացումների հասանելիությունը: Մինչդեռ, այլ վաճառողներից «GE HealthCare» ապրանքանիշի բժշկական տեխնիկա ձեռք բերելու դեպքում դրանք հաճախ աշխատում են հին, թարմացում չստացող համակարգերով, ինչը կարող է ազդել հետազոտությունների ճշգրտության վրա:

Միևնույն ժամանակ, Կառավարության 2023 թվականի մարտի 30 N 429-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տարածք բժշկական արտադրատեսակների ներմուծման նպատակով իրականացվող փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ պետական գրանցում չունեցող բժշկական արտադրատեսակների ՀՀ տարածք ներմուծման նպատակով իրականացվող փորձաքննության համար պետական գրանցում չունեցող բժշկական արտադրատեսակներ ներմուծողը պարտավոր է ներկայացնել բժշկական արտադրատեսակի յուրաքանչյուր սերիայի (խմբաքանակի) համար որակի համապատասխանության հավաստագիր, եթե կիրառելի է կամ որակը հավաստող այլ փաստաթուղթ սերիայի (խմբաքանակի) նշումով տրված արտադրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից: Փաստացիորեն «GE HealthCare» ապրանքանիշի բժշկական արտադրատեսակների մասով արտադրողի կողմից տրամադրվող որակի համապատասխանության հավաստագիր ՀՀ-ում կարող է ներկայացնել միայն

«Ար.Մեդտեխնիկա» ընկերությունը, քանի որ վերջինս է հանդիսանում ՀՀ-ում «GE HealthCare» ապրանքանիշի միակ պաշտոնական ներկայացուցիչը:

«Ար.Մեդտեխնիկա» ընկերությունը խնդրում է հիմք ընդունել վերոգրյալը և Ընկերության կողմից տնտեսական մրցակցության ոլորտում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

«Ար.Մեդտեխնիկա» ընկերությունը ներկայացրել է «GE HealthCare» ընկերության հավաստում-նամակը ՀՀ-ում ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչների մասին, «GE HealthCare» ընկերության կողմից «Ար.Մեդտեխնիկա» ընկերության աշխատակիցներին տրամադրված հավաստագրերի օրինակներ, «Ար.Մեդտեխնիկա» ընկերության կողմից տրամադրված տեղեկանքները:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունը անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների կամ ձեռքբերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը

նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորություն:

Նման պայմաններում որպես «GE HealthCare» ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչ հանդես գալու Ընկերության վարքագիծն առերևույթ կարող է պարունակել հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վի Առ Մեդիքալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2025 թ. մարտի 18
Երևան